



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 11 » 01 2021թ.

№ 08/ԼԱ/ - 08

**Հունվարի 4-10-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Հունվարի 4-10-ը դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունվարի 4-ին Արարատյան դաշտում, Լոռիում, Տավուշում նորմայից ցածր է եղել 2-4, լեռնային շրջաններում, Սյունիքում նորմայից բարձր է եղել 1-2 աստիճանով, հունվարի 5-ին նորմայից ցածր է եղել 2-4, 6-ին՝ 3-5 աստիճանով, հունվարի 7-ին Արարատյան դաշտում, Տավուշում, Սյունիքում, լեռնային շրջաններում նորմայից ցածր է եղել 3-5 աստիճանով, Լոռիում բարձր է 1-2 աստիճանով, հունվարի 8-ին Արարատյան դաշտում նորմայից ցածր է եղել 2-4, մնացած շրջաններում նորմայից բարձր է եղել 1-2 աստիճանով, հունվարի 9-10-ին Արարատյան դաշտում նորմայից ցածր է եղել 2-4 աստիճանով, լեռնային շրջաններում նորմայից բարձր է եղել 1-3, Լոռիում, Տավուշում, Սյունիքում՝ 5-7 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 9-10-ին: Տավուշում, Սյունիքում գրանցվել է +13...+18°C (Սիսիանում՝ +8°C, Մեղրիում՝ +4°C), Լոռիում՝ +11...+16°C (Վանաձորում՝ +10°C), Գեղարքունիքում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ +2...+7°C (Մասրիկում՝ +1°C), Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ 0...+4°C, Շիրակում՝ -2...+2°C, Արարատյան դաշտում՝ -1...-6°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 6-ին: Շիրակում, Արագածոտնի և Կոտայքի լեռներում գրանցվել է -14...-19°C (Աշոցքում՝ -30°C, Ֆանտանում, Արթիկում՝ -12°C Ամբերդում՝ -10°C), Վայոց Ձորում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ -10...-15°C (Թալինում՝ -16°C), Գեղարքունիքում, Լոռիում՝ -7...-12°C (Մասրիկում՝ -22°C, Գավառում՝ -17°C, Տաշիրում՝ -14°C, Օձունում՝ -6°C), Արարատյան դաշտում՝ -8...-10°C, Տավուշում, Սյունիքում՝ -4...-9°C (Սիսիանում՝ -19°C):

Հունվարի 7-ին և 9-ին Պուշկինի լ/ք-ում դիտվել է քամի 15-16մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 20-22մ/վրկ , հունվարի 8-10-ին Իջևանում՝ 9-12մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 20-22մ/վրկ, հունվարի 10-ին՝ Ստեփանավանում և Տաշիրում՝ 12-17մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 16-20մ/վրկ արագությամբ:

Հունվարի 4-ին Երևան-աէրոլուղիական կայանում դիտվել է մառախուղ 30մ տեսանելիությամբ:

Հունվարի 10-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնային կայանում 61սմ, Որոտանի լքբ.-ում՝ 33սմ, Ամբերդում և Անանուն լքբ.-ում՝ 24սմ, Ջերմուկում՝ 16սմ, Մասրիկում՝ 14սմ, մնացած շրջաններում՝ 1-11սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.52մ (10.01.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 10 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/ս

Լ.Ազիզյան